

վասնոցը ինչպէս էլ որ կրթուած լինի և զարգացած՝ այնուամենայնիւ այն մարդու շարի էլ չկայ որը արտօնեալ շրջանից չլինելով հանգերձ խղճմտանքով անուժ է իւր գործը և որդիներին սպահովում է՝ չժողնելով նոցա աղքատութեան մէջ աղգականների խնամքի տակ: Աւրեմն եթէ գործը քննենք այնպէս ինչպէս իրականութեան մէջ կայ այն ժամանակ բոլորը կհամաձայնին որ հասարակութեան բարօրութեան համար բնաւորութիւնը — անհամեմատ գերազանց է բազմամասնօթութիւնից: Գորա դէմ չեն վիճում, բայց ստանից հեռեւոյ կըրակացութիւնն էլ չեն ընդունում: Նոյն իսկ հարց չեն տալիս թէ ինչպէս բնաւորութեան վերայ արտացոլուում են բոլոր այն արհեստական միջոցները որոնք ծանօթութիւն շատացնելու համար են գործադրուում: Գորդ նպատակներից աւելի ինչ որ կարող է օրէնսդիրը աչքի առաջ ունենալ, ամենից առաջինը ամենից գլխաւորը — ժողովրդի բնաւորութեան կրթութիւնն է և իւրաքանչիւրի անձնական պատասխանատուութեան զխտակցութեան ամրապնդումը:

Նթէ ընդունենք, որ ազգի ապագան ազգը կազմող անհատների յատկութիւնիցն է կախուած, որ այդ յատկութիւնը անխուսափելի կերպով ենթարկուում է իրեն շրջապատող պայմաններին, որ այդ պայմաններից յառաջացած զգայութիւնները անխուսափելի կերպով ուժեղանում են, իսկ այդ պայմաններից անկախ զգայութիւնները թուլանում, ոչնչանում են, այն ժամանակ կհամոզուենք, որ հասարակութեան բարոյական վերանորոգումը օրէնքների և խրատների կրկնողութեամբ չի կատարուում, և աւելի ևս մըտաւոր կրթութեամբ, այլ հոգու փնտձ զգայութեանց ամենօրեայ վարժութեամբ ուստոր զգայութիւնների դէմ կուսելով: Միակ միջոցն է այն, որ մարդիկ հասարակաց կեանքի կարգ ու կանոնին այնպէս հպատակ լինեն, որ իւրաքանչիւր զեղծում շարիք համարուի իսկ օրինապահութիւնը — բարիք իւրաքանչիւր մարդու համար: Այդ միայն այդ է իրաւորութեան կրթութիւնը:

Թարգմ. ռուս. Ռ. յար. ռու. Ս. Մեկտիւն.



ՅՈՎ. ՀԱՆՆԵՍ Ը. ԿԱՐԵՅՅԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱԶԳԱՅԻՆՈՒԹԻՒՆ.

Յովհաննէս Ը-ի մասին գրուածները շատ նպաստաւոր չեն նրա համար: Այդ գրուածների մէջ մենք Յովհաննէս Կարբեցու միմիայն բացասական կողմերն ենք տեսնում: Պ. Այլէսանզր երիցեան և ժ. Բ. Բ. զարի առաջին յիսնամակի մասին գրողները մեծ մասամբ լինելով ներսէս Աշտարակեցու կուսակից կամ նրա հիմնած գալրոցի աններ՝ որպիսի աշխուժութեամբ գովարանում են ներսէսին՝ համարելով նրան հայ ազգի լաւագոյն իղձերի և հայ եկեղեցու պայծառութեան նահատակը: Նոյնպիսի աշխուժութեամբ պարսաւում են Յովհաննէս Կարբեցուն՝ որպէս հակադիր ներսէսի: Բայց մենք թէ ներսէսին շուայած ներբողների և թէ Յովհաննէսին ուղղած պարսաւների մէջ չափազանցութիւն ենք տեսնում: Անշուշտ ներսէսը իւր ունեցած շատ առաւելութիւնների հեռ ունէր և պակասութիւնների, նոյնպէս և Յովհաննէսը իւր կարծուած շատ պակասութիւնների հեռ ունէր և առաւելութիւնների, որոնք ի հարկէ ժամանակին անկողմնապահ պատմչի անաշատութեամբ երևան կը գան:

Նրանք, որոնք ցայսօր Յովհաննէսին պատարակում են, կարծում են թէ նրա սաղբանքով ներսէսը Թիֆլիզից հեռացաւ Բեսարաբիայ և նոյն սաղբանքով ինքն Յովհաննէսէսը Թիֆլիզի առաջնորդ դարձաւ ներսէսի տեղ, և շուտով էլ, ներսէսից առաջ, հայրապետական զահը բարձրացաւ:

Մեզ հասած տեղեկութիւններից դատելով՝ զիտենք, որ Յովհաննէսն ու ներսէսը լինելով Գանիէլի կուսակցութեան մարդիկ՝ լաւ յարաբերութեան մէջ են եղել: Յովհաննէսն էլ ներսէսն էլ Ս. Էջմիածնի արժանաւոր և սրտացաւ միտքներից էին, այն տարբերութեամբ, որ Յովհաննէսը Ս. Էջմիածնի շահը Ս. Էջմիածնի պարիսպներից ներսն էր նկատում, անձուկ շրջանակի մէջ, իսկ ներսէսը ընդհակառակն, նա մինչև անգամ բուն Էջմիածնի հատոյթները իւր հիմնած գալրոցի վերայ էր գործադրում և հաջիւ չէր ուզում:

ապ: Ներսէսից հաշիւ պահանջողներէց մէկն էր Յովհաննէս Կարբեցին:

Յովհաննէսը, ինչպէս երևում է նրա գրութիւններէց, համարեա Ներսէսի չափ գրագետ էր. նրան միայն պահատում էին Ներսէսի ձարպիկութիւնն ու համարձակութիւնը: Թէ Պարսից և թէ Ռուսաց տիրապետութեան ժամանակ աշխարհական իշխանութեանց հետ տեղի ունեցած բանակցութիւններն ու թղթակցութիւնները Ներսէսի ձեռքով կատարուած՝ համարուում են ժամանակի և անհրաժեշտութեան պահանջ, ուրիշների և յատկապէս Յովհաննէսի ձեռքով եղածները՝ համարուում են դաւաձանութիւն և անաբրոնիզմ:

Եթէ ի նկատի ունենանք, որ միարանեւորից արժանաւորագոյններն էին նշանակուում նուիրակի որ կարողանային ժողովրդի վերայ ազդեցութիւն ունենայ և իրանց նուիրութեան գործը արդիւնաւորել, մենք տեսնում ենք, որ Յովհաննէսը նոյն պաշտօնը կատարում է զանազան տեղերում՝ Մեծաւ արդիւնաւորութեամբ, բարի անուամբ և արդիւնաւորութեամբ բաւ: (Սմեւայն Հոյոց կաթուղիկոսութիւն և Կոփկասի Հայք մասն Բ. եր. 23—25):

Վերջ գարու առաջին քառորդին Ս. Եջմիածինը նիւթապէս և բարոյապէս քայքայման վիճակի մէջ էր: Եփրեմը չը զիմանալով Երեւանայ պարսիկ խաների բռնութիւններին ու պարտատէրերի անողոր պահանջներին, խոյս տուեց Ս. Եջմիածնից և աստանդական շրջելով հայաբնակ քաղաքներն ու գաւառները՝ վերջապէս զաղար առաւ Հաղբասում: Յովհաննէս Կարբեցին Մայր Աթոռի փակակալի կամ Ղուարարապետի պաշտօնով կատարում էր Ս. Եջմիածինը և չէր վրհատում: Այդ ծանր ժամանակին եթէ երբէք Յովհաննէսը բացակայել է Ս. Եջմիածնից, այդ եղել է կարճ ժամանակով Եփրեմ կաթուղիկոսի հրամանով ծանր յանձնարարութիւններ կատարելու համար:

Եթէ, յիրաւի Յովհաննէս Կարբեցին անարժան մէկը լինէր, նա զեռ Ղուկաս կաթուղիկոսի ժամանակից սկսած չէր կարգուել նուիրակի զանազան կողմեր, երկու անգամ չէր

ուղարկուել Ս. Պոյիս հայրապետական փոխանորդի պաշտօնով, որ սակայն անյաջող եղաւ. որովհետեւ Ս. Պոյսայ պատրիարքները իրանց անուանելով հայրապետի փոխանորդ, չէին կողմնում, որ Ս. Եջմիածնից մարդ նշանակուի այնտեղ: Անշուշտ Յովհաննէսի արժանաւորութեանը պէտք է վերադրել այն հանգամանքը, որ Եփրեմ կաթուղիկոսի բացակայութեան ժամանակ Ս. Եջմիածնի միարանները 1825 թուին խնդրում են Երեւանայ խանից կարգել Յովհաննէսին կաթուղիկոսի փոխանորդ և ծայրագոյն կատարելից արժանային գործաւնութեանց: Մենք Յովհաննէսի արժանաւորութեանն ենք վերադրում այն հանգամանքը, որ Եփրեմ կաթուղիկոսը նրան գրաւ Պատկելի մօտ է ուղարկում՝ վասն ազգային և արժանային իրողաց, որ նա Ներսէսից յետոյ Թիֆլիզի առաջնորդ և նրանից առաջ կաթուղիկոս է ընտրուում ու հաստատուում:

Թերևս կարծուելի թէ Յովհաննէսի ազդեցութիւնը հետեանք էր նրա խնամակարան կային Եփրեմ կաթուղիկոսի հետ և վերջինիս՝ անձնական համակրութեան: Յիրաւի Յովհաննէսի Սաչատուր եղբայրը, որ ինչպէս ինքն Յովհաննէսն է, ատոււմ է եղև քահանայ Աստուծոյ բարձրելոյ, ամուսնացած էր Եփրեմ կաթուղիկոսի քրոջ հետ, բայց այս խնամութիւնը տեղի էր ունեցել 1802 թուից առաջ էր Եփրեմը զեռ Ռուսաստանի նուիրակ և առաջնորդ էր և Յովհաննէսը Ղուկասից նուիրակ ուղարկուած: Բացի սրանից, ինքն Եփրեմը աւելի զէպի Ներսէսն էր համակիր քան զէպի Յովհաննէսը:

Յովհաննէսին դատաւիտոյները պահանջում են նրանից մեծազորութիւն: Յովհաննէսը այնպիսի ժամանակ բարձրացաւ հայրապետական գահ, երբ հայրապետին մնում էր իւր հովուական պարտաւորութիւնները կատարել և ս. Եջմիածնի անտեսական գրութիւնը բարւոքել: Գործունեութեան այս ասպարէզը որքան համեստ ու աննկատելի՝ նոյնքան ծանր և մեծ հմուտութեան կարօտ է:

Յովհաննէս կաթուղիկոսին մեղադրում են այնպիսի թերութիւններ ձեռք, որից ցերճ չէին և չեն կարող լինել պարսիկ խաների և

Թուրք փաշաների վարչութեան (բեժիմ) տակ ծնուած, սնուած ու պաշտօնավարութեան մէջ վարժուածները: Յովհաննէս կաթուղիկոսը մէկն էր այդպիսիներից. և այս հանդամանքին պէտք է վերագրել նրա կարճեցեալ անձնական շահախրութիւնն ու հաւատարմութիւնը իւր եկեղեցու և իւր հօտի շահերը պաշտպանելու նուիրական գործում: Այս հանդամանքին պէտք է վերագրել նրա կարճեցեալ ազիտութիւնը իւր իրաւունքի և պարտքի սահմանը որոշելու, իրաւունքը պաշտպանելու և պարտքը կատարելու գործում:

Այսու հանդերձ Յովհաննէս Բ. Կարբեցին Մայր Աթոռի անտեսական գրութիւնը որ եփրեմ կաթուղիկոսի օրով վերին աստիճանի աննախանձելի վիճակի մէջ էր, որքան ժամանակի հասկացողութիւնը ներում էր, կանոնաւորեց և բարւոքեց, ծանր տոկոսիքներով պարտքերը վճարեց և զեռ մի զուեմար էլ Մայր Աթոռի համար անտեսեց: Մայր Աթոռի ժառանգաւորաց զպրոցը բաւական կարգաւորեց: Այդ ժամանակի աշակերտներից են Աբէլ, Եղիազար, Թագէտոս Արքեպիսկոպոսները, Մակար կաթուղիկոսը և այլք, որոնք իրանց ժամանակին վայելում էին հմուտ եկեղեցականի, լաւ հայերէնագէտի ու պատմագէտի համբաւ: Յովհաննէսից յետոյ այդ զպրոցը ընկաւ և անկումը շարունակուեց, մինչև որ 1874 թուին բոլորովին փակուելով՝ տեղի տուեց ձեմարանին: Յովհաննէս Կարբեցու օրով ապարանը այնքան հարուստ և բարեկարգ էր, որ հնարաւորութիւն ունեցաւ հրատարակել եկեղեցական բոլոր գրքերը սկսած ճաշոց և Ջայնքալ շարական մեծահատոր գրքերից:

Կաւիթ—Կանիէլեան կոխեներին յաջորդեց եփրեմ կաթուղիկոսի թոյլ և վեհերոտ վարչութիւնը, որ անկարող էր զսպել միաբանութեան մէջ արմատացած բիրտ հակառակութիւնը և հաստատել բարեկարգութիւնն ու ստորագրելութեան պարտաճանաչութիւն: Առաջին անգամ Յովհաննէսին էր վիճակուած միաբանութիւնը կարգի և ստորագրելութեան պարտաճանաչութեան հրաւիրելու: Բեսարաբիս հեռացած Ներսէսը ոչ միայն անգիտանում էր Յովհաննէսի իշխանութիւնը այլ ըստպանակէք ևս էր անում և քաջալերում միա-

բանութեան մէջ ըմբոստութեան հոգին: Այս հանգամանքի հեռանքն էր հնութեանց յայտնի դէպքը: Սակայն Յովհաննէս կաթուղիկոս Կարբեցի այս աննպաստ պայմաններում ևս, չընայելով իւր համարեա 80 ամեայ զտամեալ հասակին, ամենայն տոկունութեամբ աշխատում էր վանքը բարեկարգութեան մէջ պահել և անսահման ներողամտութեամբ ու մեծ զգուշութեամբ տարաձայնութիւնների առաջը առնել:

Պ. Ալէքսանդր Երիցեանի Ամենայն Հայոց կաթուղիկոսները և կովկասի հայք մասն Բ. գրքի մէջ զրաժ է. Յովհաննէս ութերորդ կաթուղիկոս ամենայն Հայոց ծնեալ 1761 ամի ի 20 սեպտեմբերի. փախճանեցաւ ի 1842 ամի 26 մարտի: Պ. Երիցեանի նոյն շրջում մէջ բերուած Յովսէփ վարդապետ Ահապետեանի գրուածքից երևում է, որ Կարբեցին ծնուել է 1762 թուին. ուրեմն Յովհաննէս կաթուղիկոս փախճանել է ըստ պ. Երիցեանի՝ 81 տարեկան և ըստ Յովսէփ վարդապետի՝ 80 տարեկան հասակում: Ինքն Յովհաննէս Կարբեցին 1802 թուին իւր ազգաբնութիւնը կազմելիս ասում է, որ ինքն էր այդ ժամանակ մօտ 45 տարեկան, ուրեմն ծնուած մօտ 1757 թուին, ուրեմն և փախճանուելիս էր 85 տարեկան: Յովհաննէս Կարբեցի չէ, յայտնում թէ որ թուին է ծնուել, այլ ասում է. Հայր մեր Ուղարբու ևս փոխաստական լինի յերկիրն իրաց ի Տփլիսայ յաւուրս մանկաժողով հրամանին՝ Նաղրիս և բնակեալ անդ ամն քսան . . . և ծնանի ուստերս և դստերս անդանօր և ի վերագտնայն ի Տփլիսայ կրկին յերեան յետ իրբե քսան ամաց՝ ծնանիմ՝ և եօս որ եմ իրբ Խե ամաց այժմ: Բայց երբ է եղել մանկաժողովը, որից 20 տարի յետոյ ծնուել է Յովհաննէս կաթուղիկոսը:

Թամազ-Ղուլի խանը Նաղր-շահ անուամբ թաղաւորել է 1736 թուին: Մեղ յայտնի պատմիչների մէջ չը գտանք յատուկ մանկաժողով միայն 1737 թուին Նաղր-շահի նախարարներից Մեհար-Ղուլի խանը զանազան պատրուակով ժողովրդից նրանց ունեցած բոլոր ինչքը և հարստութիւնը յափշտակելու համար ծանր և անտանելի շարժարանքի է ենթարկում կանանց և չափահաս պատանիներին, իմանալու

Համար թէ թաքցրած բան էլ չէ մնացել: Հուսկ ուրեմն փորրաՀասակ աղաներին և մանուկներին է ենթարկում նոյն ասնջանքին: Եթէ այդ Համարներ մանկաժողովը որ տեղի է ունեցել 1737 թուին և վերան աւելացնենք Կարբեցու հօր 20 ամեայ պանդխտութիւնը Տիֆլիսում յետոյ վերագործն Երևան և Կարբեցու ծնունդը այն ժամանակ յիրուի կատանաք 1757 թիւը որ ըստ ամենայնի Համեմատ կրգայ Կարբեցու ցուցմանը, թէ 1802 թուին ազգարանութիւնը գրելիս՝ նա 45 տարեկան էր, ուրեմն ծնուած է 1757 թուին:

Այս ներածութիւնը արինք իսկապէս իրբն նախընթաց ծանօթութիւն Յովհաննէս կաթողիկոս Կարբեցու մասին և իրբն յառաջարան նրա կազմած իւր ազգարանութեան: Այդ ազգարանութեան բնագիրը գրուած 1809 թուին կապագոյն թղթի վերայ, որ Երևանցի պաշտիկ Եղիազարեանը սիրայօժար կամբօժտուեց մեզ 1887 թուին, իսկ մենք արագգրելուց յետոյ մեծ շնորհակալութեամբ յետ դարձրինք բնագիրը:

Այս ազգարանութիւնը կազմելիս Կարբեցին նպատակ է ունեցել իւր տոհմին իշխանական ծագումն տալ: Նոյն ոգւով սողորուած են եղել մարդիկ ամեն ժամանակ և այդ ձգտման ազգացոյցներն են այսօր Արշակունի, Բաղրատունի, Մամիկանեան, Կամարական, Հայկազունի և շ. մեծահայրն տոհմանունները:

Յովհաննէս Կարբեցին իւր ազգարանութիւնը կազմելիս ազրիւր է ունեցել ծերերի աւանդածը և Զաքարիա սարկուաղի պատմութիւնը: Նա իւր տոհմի գլուխը գնում է սին Ղազար կամ Ղազար—բէկին: Համարելով նրան Կախկիթու Բաղրատունի Ղազարի թոռն և Վրացական յորջորջմամբ Ղազար—բէկին անուանում է Ղազարէ—միրզա: Միրզա Կարբեցու պարսկական սփորութեան յատուկ անունից առաջ դրուած նշանակում է զբաղէտ, քաղաքական տախճանաւոր, զոր օրինակ միրզա—Ռիզա—խան, միրզա—Մեկրան—խան և շ. իսկ յատուկ անունից յետոյ դրուած՝ նշանակում է արքայայն իշխան, զորօրինակի Արաս—միրզա և շ. Յովհաննէս Կարբեցին իւր տոհմազու Ղազարէի արքայայն իշխան լինե-

լը կամենալով ակնարկել՝ նրան անուանում է Ղազարէ—Միրզա: Միրզա Կարբեցու անունից յետոյ գնելով:

Յովհաննէս Կարբեցին իւր ազգարանութիւնը հաւաստիացնելու համար համատարած է Զաքարիա սարկուաղի պատմութիւնը (Հաս. Գ. զլ. Ժ. 9.) : Վերջի մասունքից մի մասը Յովհաննէսիցից Վրաստան տանելու և վերջապէս Կաթարէթում կամ Զխարում ամփոփելու մասին:

Ահա այդ պատմութիւնը.

Վրաց Գաթար թագաւորի Բեթօ որդին Հիւանդանում է զոթութեան ախտով: Քաղաւորին պատմելով որ Կարբեցի զաւտի Յովհաննէսիցն է ամփոփուած ս. Վերջի մասունքը և ս. Վերջի բարեխօսութեան ապաւինող այնտեղ ուխտի գնացած ուրուկներն ու զոթիները բժշկութիւն են գտնում խորհուրդ են տալիս, որ թագաւորը իւր Հիւանդ որդուն էլ ուղարկի այնտեղ: Քաղաւորն չէ կամենում բաժանուել իւր որդուց և չէ թողլ տալիս՝ որ նա Յովհաննէսիցն գնայ: Քաղաւորը մարդիկ է ուղարկում, ս. Վերջի մասունքը իւր մօտ բերելու: Ետայն Յովհաննէսիցն առաջնորդ Յովհաննէս կախկիթուն ու Կարբեցի իշխանները չեն տալիս ս. մասունքը: Այն ժամանակ թագաւորը պարտաւորուած 12 իշխանայն պատանիներ պատանդ է ուղարկում Կարբե: Հայք հոգեւորականների և աշխարհականների ձեռքով ս. մասունքից մի մասն ուղարկում են Վրաստանսակայն մինչև Քիֆլիզ հասնելը, մնանում է թագաւորի Հիւանդ որդին, թագաւորը ս. մասունքը ամենող հոգեւորականներին ձաղկելով յետ է դարձնում, իսկ ս. մասունքը ամփոփում է Կաթարէթում կամ Զխարում: Կարբեցի հայքն էլ վրացի արևուտական պատանդներին են բանդարկում: Զաքարիա սարկուաղը որ իւր տոհմն էլ այդ իշխանայն պատանդներից սիրած է համարում՝ գնում է պատանդների անուանական ցուցակը համատարած անդեթութիւններով: Նրա ամբողջ 12 արևուտական պատանդներից երկուսը փախան իրանց աշխարհը մէկը մնաւ Յովհաննէսիցնում, մէկը բանդից փախաւ մէկն էլ դնաց Յունաց աշխարհը իսկ մնացած եօթն պատանդներից՝

1) Թէկներ մնաց Յովհաննավանքում որից սերուեցին Թէկները.

2) Աղիպէն գնաց Եզուարդ, որից սերուեցին Աղիբէկները.

3) Մոցան Քանաքեա, որից Մոծակները.

4) Խաչոն Մոզնի, որից Խաչիկները.

5) Ստեփանը Բիւրական՝ որի Բարաջան որդուց Բարաջանները.

6) Շալոփէն Ղազարաւան (Ղազրփան, Փարբի) որի Բարա որդուց Բարենը.

7) Ղապոն Քանաքեա, որից Ղապոնը և ինքն Չաքարիա սարկաւազը.

Չաքարիա սարկաւազի առաջ ընկած ցուցալի մէջ մենք չենք տեսնում Ղապարէ—միրզայի անունը, որին որպէս արքայալին իշխանի՝ Կարբեցին զնում է պատանդների զլխաւոր: Կարբեցու համար որպէս հիմք իւր տոհմապեաների վերաբերութեամբ, մնում են ձերերի ընտանացի պատմութիւնները և իւր առաջ ընկածը—վկայում ենք՝ ի Քարթլիսցիտփերայ պատմութեանց արքայիցն և քաղաքականացն Վրաց 1520 թ. Փրկչին և Վրաց 208:

Կարբեցու ասածին համեմատ վրացի ազնուական պատանդների Կարբի զայլ տեղի է ունեցել 1520 թուին: Յովհաննէս Կարբեցին, որի հայրն էր Ուղուրլու, հինգերորդ սերունդըն է Ղազարէ Միրզայի և թէ Կարբեցու ծընունդն էլ համարենք 1757—61, ուրեմն 237 տարուայ ընթացքում ուղղող ի՞նչ միմայն հինգ ծնունդ է դալիս: Բայց այս ազգարանութիւնը համեմատելով ուրիշ նման ազգարանութիւնների հետ՝ շատ էլ տարօրինակ չենք համարում:

Յովհաննէս Կարբեցու կազմած ազգարանութիւնը երեք մասից է կազմուած, առ Չաքարիա սարկաւազի և ձերերի պատմութեան համառօտութիւնը ս. Վեդրդի մասունքի Վրաստան տարուելու և վրացի ազնուական պատանդների Կարբի զայլու մասին: Բ. Վկայութիւն Վրաց պատմութիւնից, որին կից և իւր ազգարանութիւնը և Գ. Կարբեցու հայրական կապի ու գոյքի մասին տեղեկութիւններ և հարեանցի յիշատակութիւն նաղիր-շահի և Նեկիկների աւերածութիւնների մասին:

Թէև Կարբեցու մեր ձեռքին եղած ազգարանութեան երկրորդ զլխից յետոյ զրուած

է չորրորդ, որով կարծուում է թէ երրորդ զլուխը չբիայ, բայց շարադրութեան կարգին նայելով անկասկած է, որ ազգարանութիւնը ամբողջ է, և միայն զբշի սխալ է երրորդ զլուխ զրուելու տեղ չորրորդ զրուած լինելը:

Չրխալեցանք ազգարանութիւնը խճողել ծանօթութիւններով, այլ ինչ որ հարկաւոր համարեցինք՝ դրինք այս նախարանիս մէջ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Վասն մարմնոյն սրբոյ Գէորգեայ՝ որ բերեալ ի Քամրաց աշխարհէն ի Յովհաննավանք, և յետոյ տարեալ եղև ի վրաց տուն, և վասն տասն և երկու պատանդացն, որք բնակեցան ի Կարբի գիւղաքաղաք, և յայլ տեղիս՝ ժողովեալ ի Յովհաննէս վարդապետ և Կարբեցու, որ էր բերեալ և յառաջացեալ ի ցեղէ միոյ ի նոցանէ երկուսասն թաւադացն և ազնուացն պատանդաց, ի լրոյ արժանահաւատ ձերունեաց և այլոց՝ յամի տեառն 1802 ի Յփխիս:

Ի պատմութենէ Չաքարիայի և այլ մեծահաւատ ձերունեաց.

Մեծն ներքէս բերեալ զմարմին սրբոյն Գէորգեայ, հանգուցանէ ի Յովհաննավանք, յետ բազում ժամանակաց մնալոյ անդ՝ անկանի նահանգն Կարբու ընդ իշխանութեամբ Վրաց, յորում ժամանակի թագաւոր էր Վիրս Դաւիթ անուն արքայ և որդի նորին Բէժան, որդի արքայիս պատահեալ ցաւոց ուրկութեան, առաքեն առ իշխանն Կարբոյ խորհրդատուութեամբ հմուտ բժշկաց և կամ մեծամեծացն և խնդրեն յղել զմարմին սրբոյն Գէորգեայ, զի եկեալ բժշկեսցէ զորդի արքային ի ցաւոց անախ, որ անբժշկելին էր եղեալ ամենայն բժշկական ճարտարութեանց. բայց իշխանքն հղօրք Կարբու ոչ առնուն յանձն զայն հրաման արքայի այլ դարձուցանելով զպատասխանն, եթէ կամի արքայ առողջանալ, զորդի իւր յղեսցէ աստ առ ի հնազանդի սրբոյն Գէորգեայ՝ առ որ խոնարհի արքայ յղել զորդին իւր մահճօք կամ պատգարակօք, բայց մայրն նեղեալ ի զթոյն՝ ոչ յօժարի զորդին իւր հետացուցանել յինքենէ. յետոյ ստիպեալ արքային Դաւիթի վասն սերոյ որդւոյն իւրոյ յղեաց զագագատոհմն իւր հանդերձ մեաասն թաւադին և ազնուականիւ պատանդ վասն սրբոյ մարմնոյն առ իշխանն Կարբու, և զագագատոհմն իւր սերեալ էր ի Լեօն միրզայէ, որ էր արքայն Կախեթու. ի գալ պատանդացն՝ ապա թէ յօժարեալ Կարբեցի իշխանաւորաց տան զսուրբ մարմինն քանի մի արեղայիք իշխանօք և քահանայիւք տանել ի Յփխիս: Ի ժամանկն սուրբ մարմնոյն ի Մառաղբիւր՝ կամ ի Վուսիս՝ մեռանի որդի արքային, Լաւ համարին սպասաւորք սուրբ մարմնոյն վարդապետք

և իշխանք վերադարձուցանել անդրէն յետս զմարմինն ցանկալի այլ ոչ թողացուցանեն ինզրակէքն նորինս եկեալքն յարքայէն վրաց, և հարկեն ևս տանել ի քաղաք զմարմինն սքանչելագործս մինչև եկեալ հասցէ արքայն: որ էր յայժմամ արտաքոյ քան ըզքաղաքն: Եկեալ արքայն տեսանէ զորդին մեռեալ, որոյ խոշտագնեալ զսպասաւորսն սուրբ մարմնոյն ըզհոգեւորականն և զաշխարհականն եկեալսն ի Կարբուոյ արտաքսէ զնոսս յերկրէ իւրմէ իրրև զմահապարտս որդւոյ իւրոյ և յափշտակեալ զսուրբ մարմինն որպէս վնասապարտս յետ ժամանակի առաքէ յերկիրն Քուգարաց ի Կուծարէթ որ այժմ Զիւարասի և անզ հանգուցանեն ի մեծաշէն եկեղեցին՝ որ է շինեալ սրբատաշ քարամբ ուր և կայ մինչև ցայսօր ժամանակի: Զայսքանս վարդապետ ոմն միաբան սրբոյ Էջմիածնի ժողովեալ էր ի պատմութեանցն կաղ Զաքարիայի և այլոց զրեանց և պատմարանից յաճախ ընթեռնելով զպատմագիրքսն, զոր առեալ մեր եղաք ասու:

Պատանդքն երկոտասան մնացեալք անտէն ի Կարբի, յանկանիլ ժամանակաց հինգն ի նոցանէ փախըստական անկանիլն յերկիրն իւրեանց ի վրաց տուն, առեալ զայն Կարբեցոյ կասկած առնեն եօթմանցն զի մի և նոքա փախչին, վասն որոյ զմինն ի նոցանէ բնակեցուցին ի Մօզնի, զմիւսն ի Ղազարաւան, որ է Ղազրւան, զերկրորդն՝ ի Բիւրական, չորրորդն ի յԵղեվարդ, և հինգերորդն ի Քանաքեռ: Իսկ զերկու տունսն որոց մինն կոչուր Ղազարէ միրզայ և յետոյ կոչեցաւ Ղազար—բէկ կամ Ղազազ—բէկ՝ որէ նախնին մեր յորմէ սիրեալքս անուանեցաք յանուն նախնւոյն մերոյ՝ ի վրաց՝ Ղազարէ միրզեանք և ըստ Հայոց՝ Ղազազ—բեկէնք կամ Ղազար—բեկեանք, և միւսն, որոյ անունն ոչ էր յայտ որոշակի, յորմէ յառաջացեալքն կոչին Բոյաղչոնք, Ըստ խընդորոյ նախնւոյն մերոյ Ղազար—բէկին, որէ Ղազարէ միրզայն, բնակեցուցին ի Կարբի առ իւրեանս, և զայս վասն այնորիկ զի որովհետև նախնին Ղազար միրզէն էր ի ցեղէ և ի զարմէ փառաւոր և մեծահամբաւ առն Լէօն միրզային Բագրատունւոյ, որ էր ազգական արքային վրաց ի պատիւ երեսաց նորին և վասն պաշտօնատարութեան և միխթարութեան Ղազար միրզային ոչ երթալ և բնակիլ այլուր, այլ պահեն ի Կարբի: Այլ զայսցանէ ունիմք խօսիլ ի յոռաջիկայ բանսդ գլուխ երկրորդ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ

Վկայութիւնք ի քրթիւն՝ Յիսուրէքայ պատմութեանց արքայիցն եւ քաղաքականացն վրաց. 1520 թուին Փրկչ. եւ վրաց 208:

Երգ՝ թողեալ մեր զվեցիցն պատմութիւն և

որպիսութիւն պատանդացն, և սկսեցուք ի նախնոյն մերոյ Ղազարէ միրզայէն:

Երգ՝ ծերունի իշխանքն Կարբուոյ և նախնիքն մեր ըստ պատանեկութեան ժամանակին մերոյ պատմեցին թէ Ղազար բէկ նախնին մեր, որ էր մի երկու տասան պատանդացն, զոր յիշեցաք ի վերն, էր ի ցեղէ և ի զարմէ Լէօն արքային վրաց Կախէթու Բագրատունւոյ և թոռն նորինս որոյ անուն նորին կոչուր Ղազարէ—միրզայ, յետոյ ի զայն նորա ի Հայաստան՝ անուանեցաւ Ղազար—բէկ ըստ յարմարութեան լեզուի Հայոց: Երգ թէ որպէս է սոյն Ղազարէ—միրզայն թոռն Լէօն արքային Բագրատունւոյ՝ ասացից, քանզի արքայն Լէօն էառ ի կնութիւն իւր զզուտար Մամիա Քուրէլի զԹինաթեն կոչեցեալն և ծնանի ի նմանէ զորդի մի Աղէքսանդր անուն և զկնի նորին ծնանի և զորդի մի Եւէսէ անուն, զկնի միջոցի հաճութեամբ կնոջն իւրոյ բաժանի ի յամուսնոյն իւրոյ և ամուսինն այն առնու զերկուսին զորդիս իւր զԱղէքսանդր և զԵւէսէ և զնայ ի լեառն մի և շինէ անդ զվայելուչ վանս որոյ անունն կոչի Ըուանթայ և բնակի ի միջի նորին երկրորումք որդւոյք, եւ արքայն Լէօն առնու ի կնութիւն իւր ըզզուտար Ըամիսային և ծնանի ի նմանէ զերեսին որդիս այս զՔորդի, ԶԷլիմիրզայ, զՎախտանկ և զԽոսրով, որ լի աւուրքք ծերացեալ մեռանի և տիրեն զերկիրն Կախէթու Էլիմիրզայն, Վախտանգն և Խոսրովն համամարքն, իսկ մին ի սոցունց, որ էր մեծ եղբայր Քորդին նախ քան զՀայրն մեռանի ի պատերազմուս ձեռամբ պարսից զօրաց, Արովհետև զբոյրն սորա զՔարեջանն առեալ էր Սիմէօն արքայն Տփլիսու, Այս Սիմէօն արքայն ունէր զաւ ընդ պարս, որովհետև եկեալ և յափշտակեալ էին զերկիրն Սիմէօն արքային զՔարթլ, վասն որոյ խընդրեաց ի յաներէն իւրմէ այսինքն ի Լէօն արքայէ զօգնութիւն զօրաց, եւ ինքն Լէօն ոչ կամեցաւ ինքնին գնալ, այլ զորդի իւր Քորդին առաքեաց զօրօք, որ գնացեալ նորա անդ ի պատերազմուս սպանեն զնա պարսիկք, որպէս ի վերն ասացաք, Եսոյն միջոցի Գաւիթ—խան կոչեցեալն, որ էր եղբայր Սիմօն արքային, գնացեալ էր ի պարս ուրացեալ զքրիստոնէական հաւատն և որդեգիր եղեալ բռնաւորին պարսից, Ըստանօր զօրածողով լեալ՝ առնու զզօրս մեծամեծս և զայ ի վերայ Տփլիսու և առնու զիշխանութիւն նորին, և տիրէ բոլոր նահանգին այնմիկ, և զեղբայր իւր զՍիմօն—խանն ի փախուստ զարձուցանէ, վասն որոյ անդրանիկ որդի Լէօն արքային Աղէքսանդր ձեռնառութեամբ սոյն յիշեալ Գաւիթ—խանիս զօրածողով լինի և յարձակի ի վերայ եղբարց իւրոց, և սպանանէ ի պատերազմի զերես եղբարս իւր Էլիմիրզայն զՎախտանկ և զԽոսրով, և տիրէ նա ի վերայ երկիրն Կախէթու և ծնայ մի փոքր աղայ Էլիմիրզա—բէկ, զորոյ անուն նորին կոչուր Ղազարէ—միրզայ, զոր

Հաւատարմիք արք փախուցանեն զնա զաղտարար և տանեն առ Շամխալ Հաւն իւր, որովհետև թողն էր զստեր նորին և անդտօր զարգանայ և Հասանի ի չափ Հասակի, զկնի անցանկելոյ միջոցի զօրանայ Սիմէօն արքայն և զայ տիրէ ի վերայ Տիփսիսու և զՎաւրիթ—խանն նուաճեալ վանէ: Իսկ որովհետև կին Սիմէօն արքային Տօրաբոյր էր Լազարէ—միրզային, ապաւինի սոյն Լազարէ միրզային, Տօրաքեռուն իւրոյ և զայ ի Տիփսիս և անդ ամուսնանայ. ի սոյն միջոցի վերստին բնանայ Վաւուրիթ—խանն և առնու զՏիփսիսն, և մնայ Լազարէ—միրզայն ընդ ձեռամբ Վաւուրիթ—խանին, Յետ ժամանակաց որդին Վաւուրիթ խանի անկանի յանողանալի Տիփսիսու թիւնս, զոր ճարտար բժիշկք ոչ կարենան բժիշկել, և ի տարակուսի լեալ սոյն Վաւուրիթ—խանս յազգս որդւոյ իւրոյ անողջութեան՝ արք ոմանք ջերմեռանկք զեկուցանան Վաւուրիթ—խանին զբարնչեկեացն և զհրաշքին սրբոյն Գէորգեայ մասին, զոր բերեալ էր մեծին Ներսիսի Հայրապետին մերոյ ի Վամրաց աշխարհէն ի Կարրի գիւղաքաղաքն Տայոց, թէ նովաւ կարէ բժշկել որդին քու և զի էր նոյն Կարրի գիւղաքաղաքն յայնժամ ընդ իշխանութեամբ Վաւուրիթ խանին, վասն որոյ գրեաց անդ զի բերցնէ զմասն սրբոյն Գէորգեայ ի բժշկութիւն որդւոյ իւրոյ, Իսկ իշխանքն նոյն Կարրւոյ գիւղաքաղաքի ոչ առնուն բանից Վաւուրիթ—խանին և ոչ տան տանել զմասն սրբոյն Գէորգեայ, զի թէպէտ այս Վաւուրիթ—խանս ոչ էր այնքան ջերմեռանդն առ սուրբն Գէորգ, ըստ որում ուրացեալ էր, սակայն վասն նախանձու զերկոտասան թաւաղաց և անուաղարմ տոհմականաց, յորոց երկնչիւր զի խոշտանգեցին զինքն, զայսոսիկ առաքեաց պատանդս ի Կարրի, զի առաքեացն զնըշխար սրբոյն Գէորգեայ, յորոց երկոտասանից մի էր Լազարէ միրզային, ընդ որում Սիմօն—խանի կնոջ որդի էր, մի գուցէ զհաւատարմութիւնս արասցէ Սիմօն—խանին զբանս ինչ ծանուցանելով նմա կամ գրութեամբ և կամ այլ իմն կերպիւ և մանաւանդ ի յուստրելոյ Ալէքսանդր արքային Կախէթու: որ էր Տօրեղբայր նորին, այսոքիւք պատճառանօք կորոյս յերկրէ իւրմէ առաքելով զնա պատանդ:

Ա. Լազարէ—միրզայ թողն Լէօն արքային ի գալն ի Հայաստան յետ միջոցի ծնանի որդի մի Խաչատուր որ զնմանութիւն Տօրն բերեալ յինքեան և երևելի գտեալ, կոչեցաւ յարգական անուամբ Խաչատուր—բէկ, և եղև անուանի յոյժ առ ամենեան առ հետաւորս և առ մերձաւորս թէ ըստ վայելչութեան բարեգիր կազմուածոյն և հասակին, և թէ ըստ քաղցրութեան բարուցն:

Բ. Խաչատուր—բէկ ծնաւ որդի մի Յակոբ անուն որ և սա զօրաւոր գտեալ բանիւք և արգեամբք անուանեցաւ յամենից պարոն Յակոբ յարգական անուամբ:

Գ. Յակոբ որդի Խաչատուր—բէկի ծնաւ զերիս

որդիս Մաղաք, Յօր, և տէր—Սարգիս, որոց ծնունդք և սերունդք գտանին յայլ և այլ կողմանս ցարդ ըստ աւանգութեան նախնեաց մերոց. այսինքն, Յօրն՝ յԵլլաղա՝ այնէ Ռուսէլի, և տէր Սարգիսն ի Զմիւռին, իսկ վասն Յօրայ ունիմք խօսել յառաջիկայ բանսք:

Դ. Մաղաք անդրանիկ որդի Յակոբայ ծնանի զհորեմի որդիս Ռուզուրու: Վասպար, Մեղքոն և Բողղասար, և եթն գտներս:

Ե. Ռուզուրու անդրանիկ որդի Մաղաքայ ծնաւ զչորս որդիս Մաղաք, Խաչատուր, Յովհաննէս և Գէորգ, և երկու գտներս:

Զ. Վասպար որդի Մաղաքայ ամուսնացեալ ըստ աշխարհի մեռանի սնորդի:

Է. Մեղքոն երկրորդ որդի Մաղաքայ ամուսնացեալ ըստ աշխարհի ծնանի երկուս որդիս Մարտիրոս և Աղաբէկ: Մարտիրոսն ամուսնացեալ ըստ աշխարհի ծնանի երկուս որդիս Մեղքոն և Վասպար, Աղաբէկն ևս ամուսնանայ ըստ աշխարհի և մեռանի սնորդի:

Ը. Մաղաք անդրանիկ որդին Ռուզուրուի ծնաւ որդի մի և կոչեցաւ անուն նախաՏօրն Ռուզուրու և զուսոր մի ևս:

Թ. Խաչատուր երկրորդ որդի Ռուզուրուի ամուսնացեալ ընդ ջեռն Եփրեմայ արքեպիսկոպոսին նուիրակին և առաջնորդին երկրին Ռուսաց, որ և սա եղև քահանայ Աստուծոյ բարձրելոյ և ծնաւ ուստերք և գտերք, յորոց մնացեալ է ուսոր մի Յովհաննէս և զուսոր մի ևս:

Ժ. Յովհաննէս երրորդ որդի Ռուզուրուի մնացեալ յաշխարհէ և զհետ կրօնաւորական կարգի չոգեալ միաբանեցաւ իՍուրբ Էջմիածին, որ է պատմող բանիցս:

ԺԱ. Գէորգ՝ չորրորդ որդի Ռուզուրուի ծնաւ ուստերս և գտերս յորոց մնացեալ է ուստերք Յովակիմ և Գրիգոր և զուսոր մի ևս: Արպէս ցուցանի սոյն վերորդեալսն ազգաբանութեան ծառոյն նումրայով:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԳ

Յաղագս հարկաւոր թղթոց մերոց՝ որք կային մինչև ի ժամանակս Յօրայ, զոր տեսեալ էին ծերունի իշխանքն Կարբույ և մանաւանդ ծերունի ոմն, որոյ անունն կոչէր Ղոնճոնց Նիկողայոս, զոր ևս առաւելապէս քաջ տեղեակ է:

Արդ կարևոր համարիմ և զայս ևս ծանուցանել յետագայիդ իմոյ, զի պատմութիւնք նախնեաց մերոց՝ բաց ի Զաքարիա պատմութեանէ գտանէին և աւանգութեամբ նախնեաց մերոց՝ ի գիր արձանացեալք հայերէն և վրացերէն, մինչև ցՅօր սկսեալ



ի Լէօն միրզայէն և այսր. որ սոյն Յօրս էր թոռն Խաչատուր—բէկին որդւոյ Լազարէ—միրզային: Եւ ևս գտանէին և թուղթք պիտանիք ամենայն կալուածոց մերոց, որք կոչին հօսճէթ կամ զսպալաչք ընդ վերոյ յիշատակեալ թղթոց, սակայն մնացին այն ամենայն ի ձեռս Յօրայ, քանզի յաղողակ գրտեալ սորա յոյժ քան զեղբարս իւր: և զօրաւոր ի գրան օսմանեան տէրութեանն որք տիրապետեալ էին յայնժամ զերկիրն մեր, առ ինքն ունէր զամենայն թուղթսն հարկաւորք, իբրև դիպուածով իւրք պատահեցաւ նմա տուգանել ի գրանէ օսմանցոց և տարապարտ մեռանել և յաւարի առնուլ ամենայն ընչից նոցին, կորեան և այնորիկ բազում իրաց պիտանիք և կարևոր թուղթք ընդ կորնչիլ ընչից նորին, որպէս պատժէին իշխանք ձերունիք Կարբուոյ, և մանաւանդ Ղոնջոց Նիկողայոսն, որ տեսեալ էր իսկ աչօք զթուղթսն և ընթերցեալ բազմիցս, որ և սոյն Ղոնջի Նիկողայոսն էր ամաց հարիւրից, մանաւանդ զի և պատմէր թէ քանի աղմուկ և խրուովութիւն իցէ յառաջացեալ վասն այսր ի մէջ եղբարցն Յօրայ, քանզի եղբարք սորին Մաղաք և տէր Սարգիս չեն կամեցեալ, զի այնորիկ թուղթք մնայցեն ի ձեռս Յօրայ, այլ և Յօր չզօրագոյն գրտեալ՝ բռնի յափշտակեալ է զայնս ի ձեռաց նոցին օժանդակութեամբ օսմանեան բռնաւորացն, և զի տկար գտեալ Մաղաքայ և տէր Սարգսի հօսակ յետոյ բազում կագից և կուռոյ թողեալ են յակամայ կամս ի ձեռս նորին, և ի յենթարկելն նորին զանազան փորձանաց ի նոցին իսկ օսմանցոց և ի մեռանելն կորեան և անհետ եղեն և այնորիկ, որ պատմեցաւ: Եւ այսպէս բարձաւ ի մէջ յիշատակութիւն նախնեաց և ծանօթութիւն սեպհական կալուածոց նոցին, որք կային թէ՛ ի Կարբի և թէ՛ ի վրացտուն, եւ թէպէտ մնացին սակաւ ինչ նշմարանք թղթոց ի ձեռս Մաղաքայ նախահօր մերոյ, այլ սակայն գալ նազրին յաշխարհս մեր և առնուլ պատերազմաւ զերկիր մեր զՀայաստան ի ձեռաց օսմանցոց և վանել անտի զնոսին իսկ զօսմանցիս և ի լինելն զանազան և ծանր հարկապահանջութեանց ի բնակչաց երկրին, որ արպապ կոչի ուսմիօրէն և մանաւանդ ի ժողովել նազրին զտղայս և զաղջկուռնս Հայոց, յայնժամ բնակիչք երկրին Երևանայ և մանաւանդ Կարբեցիք ցան և ցիր լինին յայլ և այլ կողմանս աշխարհաց, և երկիրն իսպառ ամայանայ ի բնակչաց և քաղաք և գիւղք և աւանք քանդին և աւերին և այգիք և անդաստանք կեր և կուր լինին երկվարաց զօրաց և սմբակակոխ կորնչին, և տունք և ապարանք և հոյակապ եկեղեցիք և այլ հաստակատոց և չքնաղագեղ շինուածք բուրբովին քանդեն և եղծանեն, մանաւանդ Կարբուոյ գիւղաքաղաքի, որ իբրև զգրախոս իմ զարդարեալ և վայելչացեալ էր, և այսպէս բարձրափայլուչ երկիրն Հայաստան խրթնացեալ ի զարթուց և ի շինուածոց, ևս և առաւել

դատարկացեալ ի բնակչաց, սգալի լինի տեսողաց և ողբալի, և ուր գտանին այժմ Երևանցիք և Կարբեցիք և այլ արեւելցիք, դոզցես յայսմ ժամանակի գնացեալ են անդ: Եւ եթէ մնացին և փոքր ինչ վայելչութիւնք երկրին, զայն ևս ի սատակել նազրին, ազգք զեկաց (որք և լեզգիք կոչին) հետցհետեւ աւերեալ ոչընչացեալ են որպէս և մինչև ի ժամանակըս մեր ևս տակաւին կային քանդէին և գերէին զմնացեալսն: Յայսպիսի աղմկեալ ժամանակի Մաղաք հաւն մեր զպէսպէս տառապանս և զվիշտս կըրեալ ի պարսից և ի զեկաց և ծանր ծանր տուգանաց և հարկաց ենթարկեալ առեալ զկին փաստական լինի յամուր տեղիս երկիրն հանդերձ դատերք իւրովք յահէ մանկածողով հրամանէ նազրին, և հօսակ ամենայնի սպանանի ի լեզգեաց՝ ի Կարբի յայգեստանս նորին, գողով ձեր և ոչ կարելով ընդ այլ ընկերացն իւրոց զփախուստ առնուլ այլուր, իսկ կին սորին, որ էր դուստր փառաւոր իշխանին Միրաքայ, կրեալ զբազում վիշտս ընդ առն իւրոյ, յետ ամենայնի գնացեալ ի Քանաքեռ, վախճանի անդէն առ զստերն իւրոյ Եղիսաբէթի, և այսպէս իսպառ անհետ լինի յիշատակութիւնք նախնեաց մերոց և նշմարանք թղթոց և զարալայից մերոց, բայց որպէս աւանդութեամբ նախնեաց և ձերունեաց և մանաւանդ ըստ պատմելոյ և վկայելոյ գրութեանց պատմութիւնից ի լրոյ առեալ գրեցի աստէն զձերնըդարանութիւն Լեօն—միրզային և թոռնի սորին Լազարէ—միրզային հասուցեալ մինչև ցվերջին ծնունդս նոցին, այսպէս ոչ զանդաղիմ յիշատակել աստէն և զբնական կալուածս, զայգիս, զանդաստանս և զըրաղացս զպանդոկս և զայլ սեփական կալուածս մեր, որք են ի Կարբի և ի վրացտուն որչափ լուեալ եմ և գիտեմ ի հօրեղբարցէ իմոց և այլ ձերունեաց: Արդ մեր բնական կալուածքն ի Կարբի են այսորիկ, մէկ մեծ պանդոկ որէ քարուանսարայ, երեք այգի մեծ Կարբուոյ, երկու այգի ևս զաշտափայրի նորին, բայց աւեր այժմ, տեղիքն միայն կան. նաև թէ ի դաշտափայրս և թէ՛ ի լերինս Կարբուոյ ունիմք բազում մեծամեծ արտս հողոյ և զագարախս, ի ձորն Կարբուոյ որչափ ջրաղացք գոն, մեր են ամենայն, նոյնպէս և Միրաքայ բոլոր կալուածքն, որք յայնիք են ամենից Կարբեցոց ներկայ եղելոց, մեր են, քանզի սերունդք Միրաքայ ոչ գոն, և դուստր սոյն այս Միրաքայ էր կին Մաղաքայ և մայր Աղղուրլու հօր մերոյ՝ որ լինի մեր տատըն և այլ բազում արքա և շինուածք կար ի քաղաքաւ (°) և ի վրացտուն, որոց և զապալաչք կային մինչև ի ժամանակս հաւուն մերոյ Մաղաքայ և Յօրայ, զոր տեսեալ էին ձերունի իշխանքն Կարբուոյ և ձերունի Ղոնջոց Նիկողայոսն իւրով աչօք և ընթերցեալ, բայց կորեան ամենեքեան, որպէս պատմեցաք լիսպէս ի վերջ հանդերձ պատճառանօքն:

Արդ՝ ըստ որում ես այժմ ի Տիփսիս քաղա-

քիս ընդ բոլոր միաբանիցն Արրոյ Կըմիածնի պանտրխտացեալ, անհնարին իմն է մեզ զարդիս զնալ Նրեան՝ ի Աարրի և Վերահասու թեամբ գրել զորոշ ինչ տեղեկութիւն զկալուածոց մերոց, բայց յորժամ ողորմեսցի տէր Նրուսաղէմի և այց ինչ մեզ արասցէ վտարատելոյս և յերկիրն Հայրենեաց մերոց կրկին զմեզ ժողովեսցէ, յայնժամ Աստուծով զամենայն կալուածս մեր յականէ յանուանէ տեղեկացեալ ի գիր եմ արձանացուցանելոց Հանդերձ որքանութեամբք, մեծութեամբք, լայնութեամբք և երկայնութեամբք նոցին, եթէ տէր ժամանակ տացէ երկար կենաց մերոց, Ընդ ժամանակն ընդ այնոսիկ, յորում աղմկեալ էր աշխարհն մեր պէսպէս խռովութեամբք և տառապակրութեամբք ի բռնաւորէն Նազըր—շահի որ է Թահմազ-զուլի-խանն, Հայրն մեր Աղուրէու ևս փախտական լինի յերկիրն Արաց ի Տփլիս Հանդերձ Գասպար, Մելքոն և Բաղդասար եղբարքք իւրովք Հինգ ամօք յառաջ քան զմահ Հօրն իւրոյ Մաղաքայ յաւուրս մանկաժողով Հրամանին Նազրի և բնակեալ անդ ամս քսան ամուսնանայ ընդ զստեր Ձաքարիայ Էեղինար անուն և ծնանի որդիս և զստերս անզանօր. և ի վերադառնալն ի Տփլիսեաց կրկին յերեան յետ իրք քսան ամաց՝ ծնանիմ և ես որ եմ իրք ին. ամաց, Այժմ զօրացեալ Հօր մերում յանդ յերեան բարի անուամբ և յաջողութեամբ եղև երևելի յոյժ՝ ի մէջ ազգի մերում և բնակչաց երկրին յանուն կոչեցաք մեք յետոյ Աղուրլեանք, որպէս և մինչև ցայժմ ի բոլոր բնակչաց երկրին ազգ մեր և ծնունդք կոչին և անուանին Աղուրլեանք. զայսքանս առ այժմ բաւ Համարեալ՝ կնքեմ զրանս:

Յ. Վ. Տէր Մովսիսեան



### Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Մ

(ԹՈՒՂԻՒՄ ԳՐԻՒՄ՝ ՎԱՐԳԱՊԵՏԻՆ, ԱՐ ԳՈՇՆ ԿՈԶԻՐ.)

(Շարունակութիւն) \*

Վասն այն և Յեսու Նաւեայ 1 նախ2 անցուցել5 ընդ Յորդանն զժողովուրդն ի խորհուրդ մկրտութեանն 4, և ապա թլփատէր ի Գաղղաղիս 5. և նախ Մոսէս յամսն և ի ծովն մկրտել էր 6\*: Աւ այլ զհաց7 պատարագին բաղարձ հրամանցին 8 առաքեալքն, վասն զի Քրիստոս զբաղարձն էտա և ասաց. Այս է մարմին իմ. զայս արարէք առ իմ յիշատակ 9\*: և աւր բաղարձակերաց 10 էր: Եւ արդ որ խմորով վարեն լուծիչ են կտակին Տեառն: զի բաղարձն աւրինակ էր 11 անապական մարմնոյն Քրիստոսի. զի խմոր թէպետ և ի նոյն բնութենէ հացին է, սակայն բաղարձեայ լինելով քացախել 12՝ նշանակ ապականութեան է. զի մարմինն 13 Քրիստոսի բնութեամբ մեր է, բայց ծննդեամբ անխտ է և անապական, Բաւական է վան խմորոյն ասացեալքն յԱռաքելոյն 14 և յԱստուածաբանէ, Եւ ի Պիտրոսէ առաքելոյ 15 հռոմեացեոցն 16 բաղարձիւ աւանդեաց ապատարագել. և Լուսաւորիչն

- \* Տես Արարւս 1900 թ. համար ԺԱ. հր. 562:
- 1. Նաւեան.
- 2. Ս. Ասէ.
- 3. անցուցեալ.
- 4. մկրտութեան.
- 5. եւ. զժողովուրդն ի Գաղղաղայ Բ. ի Գաղղաղայ.
- 6. մկրտ.
- 7. Այլ եւ ի հաց.
- 8. բաղարձ հրամանցին.
- 9. առ իմոյ յիշատակի.
- 10. բաղարձակերաց.
- 11. է.
- 12. քացախել.
- 13. Ա. մարմին.
- 14. յԱռաքելոյ.
- 15. յառաքելոյ.
- 16. Ա. Հրոմայեցոցն. Բ. Հռոմայեցոցն.
- \* Ա. Կորնթ. ԺԱ. 23:
- \*\* Մատթ. ԻԶ. 26 Մարկ. ԺԳ. 22 Դով. ԻԲ. 19: